

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ
МАТЕРИАЛЫ ЕЖЕГОДНОЙ НАУЧНОЙ СЕССИИ 2015 ГОДА

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS
PROCEEDINGS OF THE ANNUAL SCIENTIFIC SESSION OF 2015

1.7 (17)

МАТЕРИАЛЫ КОНФЕРЕНЦИИ, ПОСВЯЩЕННОЙ
100-ЛЕТИЮ ГЕНОЦИДА АРМЯН

PROCEEDINGS OF THE CONFERENCE DEDICATED TO THE
100TH ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2016

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2015 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ

1.7 (17)

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ**

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2016

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.թ., դոց. Ռ. Մելքոնյան
բ.գ.թ., դոց. Յ. Բաղդասարյան
բ.գ.թ., դոց. Ս. Գրիգորյան
բ.գ.թ., դոց. Խ. Վարդանյան
բ.գ.թ. Չ. Սարգսյան
ի.գ.թ. Տ. Սիմոնյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. С. Мурадян
к.ф.н., доц. Р. Мелконян
к.ф.н., доц. А. Багдасарян
к.ф.н., доц. С. Григорян
к.ф.н., доц. Х. Варданян
к.ф.н. З. Саргсян
к.ю.н. Т. Симонян

Editorial Board

DSc, Prof. S. Muradyan
PhD, Associate Prof. R. Melkonyan
PhD, Associate Prof. H. Baghdasaryan
PhD, Associate Prof. S. Grigoryan
PhD, Associate Prof. Kh. Vardanyan
PhD Z. Sargsyan
PhD T. Simonyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,

Էլ. փոստ՝ sss@ysu.am

ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.yasu.am.

*Ժողովածուն հրատարակվում է Հայաստանի երիտասարդական
հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:*

ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԲՈԳՂԱՆ ԳԵՄՔԱՐՍԿՈՒ ԼԱՄԱԿՆԵՐՈՒՄ

Լեհ հասարակական գործիչ, հրապարակախոս, արևելագետ, գրող և թարգմանիչ Բոգդան (Ալեքսանդր) Անտոնի Գեմբարսկին Հայկական հարցով սկսել է զբաղվել 20-րդ դարի երկրորդ կեսից: Նա գրել է հոդվածներ Հայոց ցեղասպանության, հայ ժողովրդի հետագա ճակատագրի, Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայերի իրավունքների վերականգնման անհրաժեշտության մասին («Նամակ իմ հին թուրք ծանոթին», «Նամակ թուրք մտավորականներին», «Բաց նամակ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար, նորին մեծություն պարոն Ու. Տանին», «Բաց նամակ Հնդկաստանի նախագահ, նորին գերագանցություն պարոն Սարվապալի Ռադիակրիշնանին», «Նամակ իմ հայ ընթերցողներին», «Երեք նամակ աշխարհի ընթերցողներին», «Շրջանի Հայկական քառակուսին ունի իր լուծումը» (նամակ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին, 1977 թ.): Իր հոդվածներում նա դատապարտում է հայերի ցեղասպանությունը, համամարդկային բարոյական և իրավական չափանիշներով ապացուցում, որ հայ ժողովրդի իրավունքները պետք է վերականգնվեն իրենց պատմական հայրենիքի որոշակի սահմաններում՝ ելքով դեպի Սև ծով: Հանդիպելով Թուրքիայի կողմից զգալի խոչընդոտների՝ Գեմբարսկին, այնուամենայնիվ, չի դադարեցրել և շարունակել է իր հայանապաստ գործունեությունը:

Բ. Գեմբարսկին նամակագրական կապեր է ունեցել Հայաստանի և Սփյուռքի գրողների ու մշակութային գործիչների հետ: Նրա գրչին է պատկանում «Մորիտորի» (լատ. «Մահվան դատապարտվածները») վիպակը, որը նվիրված է Մեծ եղեռնին: Նա նաև թարգմանել և երկու հատորով հրատարակել է հայ գրողների երկերը:

1964 թ. Բ. Գեմբարսկու «Նամակ իմ հին թուրք ծանոթին» հոդվածի հայերեն թարգմանության ձեռագիրը լայնորեն պահանջված էր Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հետագայում՝ 1980-90-ական թթ., նրա հոդվածներն արդեն լույս էին տեսնում հայաստանյան մամուլի էջերում, իսկ 1989-1990 թթ. լույս տեսան Ա. Մադոյանի և Յ. Կարճիկյանի հոդվածները, որոնք նվիրված էին 1978 թ. մարտին վախճանված Բ. Գեմբարսկու հիշատակին:

Յ. Կարճիկյանի ջանքերով 1990 թ. Երևանում լույս տեսավ «Նամակներ աշխարհին» ժողովածուն, որտեղ ամփոփված են Գեմբարսկու մի շարք հոդվածներ՝ նվիրված Հայ դատի պաշտպանությանը:

Պատմաբան, պրոֆ. Պ. Հովհաննիսյանը «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 2004 թ. առաջին համարում հրատարակել է սփյուռքահայ գրող Վահե Վահյանի կողմից իրեն տրամադրված՝ Բոգդան Գեմբարսկու մի քանի նամակների հայերեն թարգմանությունը:

Վ. Վահյանին ուղղված իր նամակում (թվագրված 16 օգոստոսի, 1962 թ.) Գեմբարսկին գրում է, որ մտադիր է փոփոխություններ կատարել իր հայտնի «Նամակ իմ հին թուրք ծանոթին»¹ բաց նամակում ավելացնելով նախաբան և վերջաբան, իսկ նշանավոր գործիչների կողմից հավանություն ստանալուց հետո հոդվածը պիտի տպագրվի հինգ լեզուներով՝ «Բաց նամակ թուրք մտավորականներին»² փոփոխված խորագրի ներքո: Այս նամակով Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Լեհաստանի կաթոլիկ գրողների կողմից Գեմբարսկին լիազորվում է նրանց անունից բանակցություններ վարել առանձին տերությունների ներկայացուցիչների հետ հայերին իրենց հայրենիքը խաղաղ ճանապարհով վերադարձնելու արդար ցանկությանն օգտակար լինելու համար³:

Նա ջանքեր էր գործադրում, որ Ցեղասպանության 50-րդ տարելիցի կապակցությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ն 1965 թվականն ընդունի՝ որպես Հայկական տարի: Այս առաջարկի փաստարկումը տեղ է գտել «Թուրք մտավորականներին» ուղղված բաց նամակում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի ուշադրությանը ներկայացվելուց

¹ «Նամակ իմ հին թուրք ծանոթին» հոդվածն առաջին անգամ լեհերեն լույս է տեսել Վարշավայում հրատարակվող «Կյորունկի» շաբաթաթերթի 1961 թ. նոյեմբերի 20-ի համարում: Առաջին անգամ հայերեն լույս է տեսել «Ավանգարդ» օրաթերթի 1989 թ. դեկտեմբերի 13-ի համարում:

² «Բաց նամակ թուրք մտավորականներին»-ը «Նամակ իմ հին թուրք ծանոթին» հոդվածի նոր, ընդարձակ տարբերակն է:

³ «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, «Հեռավոր աստղի լույսը. Բոգդան Գեմբարսկի», Երևան, 2004, էջ 121:

առաջ անհրաժեշտ էր պաշտոնապես հավանություն ստանալ մի քանի պետությունների կողմից: Այս առումով Գեմբարսկին գտնում էր, որ չի կարելի հույս դնել սոցիալիստական և կապիտալիստական երկրների վրա, քանզի վերջիններս չեն ցանկանա առաջացնել Թուրքիայի դժգոհությունը: Ըստ նրա՝ հարկավոր է այս գործողության մեջ ընդգրկել մի քանի չեզոք երկրներ, որոնք Թուրքիայի հետ քաղաքական կապեր չեն ունենա: Գեմբարսկին մասնավորապես հույսերը կապում էր Յնդկաստանի հետ՝ որպես մեծ և ազդեցիկ, միևնույն ժամանակ՝ չեզոք երկիր:

Նշված նամակում Գեմբարսկին Հայոց ցեղասպանության անպատիժ մնալու փաստը որակում է՝ որպես «ծանր խնդիր, որը հիսուն տարի տանջում է համայն քաղաքակիրթ մարդկության խիղճը և լինելով Աստծո ու մարդկության բոլոր օրենքների դեմ փաստ, այնուամենայնիվ, դեռ չի ստացել որևէ արդարացի լուծում»¹:

1961 թ. նոյեմբերի 20-ին Վարշավայի «Կյորունսկի» շաբաթաթերթում տպագրվեց Բ. Գեմբարսկու «Նամակ իմ հին թուրք ծանոթին» հոդվածը, որը մեծ արագությամբ տարածվեց հայ իրականության մեջ՝ հայերեն և ռուսերեն թարգմանությամբ²: Նամակը կարդալով՝ հասկանում ենք, որ հեղինակն ու նամակի հասցեատերը ծանոթ են դեռևս ուսանողական տարիներից և լավ բարեկամներ են եղել, հետաքրքրվել են միմյանց ժողովրդի պատմությամբ, մշակութային արժեքներով: Նրանք ծանոթացել էին 1936 թ., և այդ ժամանակից սկսվել էր նրանց խոսակցությունը թուրքերի կողմից հայերի կոտորածների մասին, ինչից հետո նամակից պարզվում է, որ թուրք ծանոթն արդեն խուսափում էր նամակի հեղինակից, և ահա 25 տարի անց Գեմբարսկին նորից դիմում է նրան՝ կրկին հիշեցնելով իրենց գրույցի թեման, որը թուրքն ամեն կերպ փորձում է շրջանցել:

Իր նամակում Գեմբարսկին նշում է, որ իր թուրք ծանոթը ոճրագործություն է համարում իրեաների նկատմամբ իրագործած դաժանությունները, մինչդեռ գերմանացիներն այս առումով թուրքերի «ուշիմ աշակերտներն» էին, և այն, ինչ տեղի ունեցավ իրեաների նկատմամբ 1942-1944 թթ., կրկնությունն էր այն բանի, ինչն իր հայրենակիցներն իրագործել էին հայերի հանդեպ դեռևս 1915 թ.:

«1915 թ. կոտորածների ժամանակ շարունակվեց հաջորդ հինգ տարիների ընթացքում ընդհուպ մինչև հայերի դիմադրության բոլոր կետերի վերացումը. կետեր, որոնք գտնվում էին Կիլիկիայում, Անատոլիայում, Վանա լճի շրջակայքում, Սիրիայում, ռուսական Ադրբեջանում և Ղարսի մարզում: Այս կոտորածի ընթացքում զոհվեց ընդհանուր թվով երեք միլիոն հայ, որը կազմում էր ամբողջ ժողովրդի 60 տոկոսը: Այդ ժամանակ շարդեղից խուսափեցին միայն նրանք, ովքեր գտնվում էին ձեր իշխանության սահմաններից դուրս: Վերադառնալով ներկայիս և հաշվի առնելով քաղաքական վիճակը 1911 թվականին, ինչպես և նրանց բնական աճի տոկոսը վերջին 50 տարիների ընթացքում՝ ընթացիկ 1961 թվականին նրանք պետք է հասնեին 10 միլիոնի, իսկ իրականում հազիվ չորս միլիոն են»³:

Ըստ Գեմբարսկու՝ սպանելով մի մարդու, սպանում են նրա դեռևս չծնված սերունդներին հարյուրավոր ու հազարավոր տարիների հեռանկարում, և կոտորածների կազմակերպիչներն ամենից առաջ հենց այդ նպատակն էին հետապնդում:

Գեմբարսկին գրում է թուրքերի կողմից հայերի կոտորածների մասին՝ բարձրացնելով պատասխանատվության և փոխհատուցման հարցը: Նա ընդգծում է, որ թուրքերը յուրացրել են հայկական հողերը՝ «որպես յուրահատուկ մի պարզև ժողովրդասպանության համար»⁴: Գեմբարսկին զարմանում է՝ «ինչո՞ւ հայերին նահատակելը պիտի պարզև արժանանա, երբ լեհերին ու իրեաներին նույն ձևով նահատակելը պաշտոնապես ճանաչված է՝ իբրև մարդկության դեմ գործած ոճիր»⁵:

«Չեմ կարողանում հասկանալ, - գրում է Գեմբարսկին նամակում, - ձեր մինչայժմյան անտարբերությունն այն ոճրագործության նկատմամբ, որ 46 տարի է, ինչ ծանրացել է ձեզ վրա: Չեմ հասկանում, թե ինչպես այս պայմաններում կարող է ապրել մի ժողովուրդ, սիրել իր հայրենիքը, ծիծաղել և ուրախանալ, կարողալ հումանիտական գրքեր, այցելել արտասահման և հյուրընկալել օտարերկրացիներին: Կարծում եմ, որ ճիշտ այդպիսի տեսք կունենար գերմանական հասարակությունը, եթե Հիտլերը հաղթանակեր երկրորդ համաշխարհային պատերազմում: Սակայն այդ դեպքում ողջ աշխարհը խենթացած կլիներ: Իսկ դուք, հակառակ ամեն ինչի, ապրում եք նորմալ աշխարհում»⁶:

«Ուղղակի չեմ կարողանում երևակայել, որ ձեր լեզվով լույս տեսնի որևէ հայկական «Ամնա Ֆրանկի հուշատետր»՝ չնայած այն սոսկալի տարիներին սպանեցիք առնվազն մեկ միլիոն չափահաս աղջիկ-

¹ «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, «Հեռավոր աստղի լույսը. Բոգդան Գեմբարսկի», Երևան, 2004, էջ 121:

² Թարգմանությունը կատարել էր Երևանում ապրող լեհուհի Մարիա Գրոխոլսկան:

³ **Գեմբարսկի Բ.**, «ԱՄՄԱԿ ԻՄ ՀԻՆ ԹՈՒՐԵ ԾԱՆՈԹԻՆ» («Նամակներ աշխարհին») ժողովածու, կազմեց, խմբագրեց, ծանոթագրեց Հ. Կարճիկյանը, Երևան, 1990, էջ 8:

⁴ Նույն տեղում, էջ 16:

⁵ Նույն տեղում:

⁶ **Գեմբարսկի Բ.**, «ԱՄՄԱԿ ԻՄ ՀԻՆ ԹՈՒՐԵ ԾԱՆՈԹԻՆ» («Նամակներ աշխարհին») ժողովածու, կազմեց, խմբագրեց, ծանոթագրեց Հ. Կարճիկյանը, Երևան, 1990, էջ 8:

ների ու դեռատի կանանց, որոնք այն ժամանակվա Արևելքի համար բավականաչափ կիրթ էին: Նույն-
իսկ Ֆրանց Վերֆելի կլասիկ գիրքը, որքան ինձ հայտնի է, Ձեզ մոտ արգելված գրականության ցուցա-
կում է գտնվում»¹:

Գեմբարսկին նշում է, որ իր նամակն այլևս հասցեագրված չէ իր թուրք ծանոթին, քանի որ նա չար-
դարացրեց իր վրա դրված հույսերը և ուժ ու խիզախություն չգտավ իր մեջ՝ իր հայրենիքում ձայն բարձ-
րացնելու՝ ի պաշտպանություն նահատակված ժողովրդի: Այս նամակը հասցեագրվում է նրանց, ովքեր
թուրք ժողովրդի ճշմարիտ խիղճն են՝ նրա գրականագետներին, արվեստագետներին և ուսուցիչներին,
համաշխարհային համբավ վայելող թուրք գիտնականներին, երիտասարդության դաստիարակներին ու
բարեկամներին:

Գեմբարսկին, նպատակ ունենալով աշխարհին լսելի դարձնել դեռևս իր արդարացի լուծումը
չգտած Հայկական հարցը, բաց նամակով դիմում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին՝ անկեղծորեն ար-
տահայտելով իր մտքերը դարի ամենացավալի հարցի շուրջ, որը մինչ օրս տանջում է ամբողջ մարդկու-
թյան խիղճը: Նամակում նա շարադրում է Հայկական հարցի լուծման իր թեզը, որը պետք է տրա-
մադրվի Թուրքիայի ներկայացուցչին, որպեսզի նա ներկայացնի իր կառավարությանը, և հետո տեղե-
կացնի, թե արդյոք թուրքական կառավարությունը հակված է այս թեմայի շուրջ էական բանակցու-
թյուններ վարելու:

Նամակի սկզբում Գեմբարսկին հարկ է համարում շեշտել, որ ինքը հայ չէ, և իր նամակը թե-
լադրված չէ որևէ կառավարության կողմից: Իր նամակն, ամենից առաջ, ամբողջ մարդկության խղճի
արտահայտությունն է, այն խղճի, որ չի կարող հանգիստ գտնել՝ անտեսելով հայ ժողովրդի 60 տոկոսի
ոչնչացման ու նրա պատմական հայրենիքի 90 տոկոսի կորստի փաստերը²: Եվ եթե ինքը լինել ոչ թե
լեհ, այլ թուրք, նույնպես չէր տատանվի հանձնելու այս նամակը, քանի որ այն բնավ թուրք ժողովրդի և
թուրքական կառավարության դեմ թշնամական գործողություն չէ: Ամբողջ խնդիրը, որ նա բարձրա-
ձայնում է իր նամակում, թելադրված է Թուրքիայի պատիվը փրկելու ձգտումով, այն պատիվը, որ
երիտթուրքերն ստորաբար ոտնահարեցին:

Նա շեշտում է, որ միջազգային տրիբունալի որոշումները պարտադիր են ոչ միայն ներկայի ու ապա-
գայի, այլև անցյալի համար: Նյուրնբերգի միջազգային դատարանի որոշումներում դատապարտված
հիտլերյան ռեժիմի բոլոր ռժիրները տեղի են ունեցել դատարանի առաջին կիստից առաջ: Այնուամե-
նայնիվ, հենց այդ որոշումների հիման վրա պատիժ կրեցին ռժրագործության գլխավոր կազմակերպիչ-
ները: Այդպիսի ռժիրները վաղեմության պատճառով անպատիժ չպիտի մնան³: Խոսելով հայ ժողովրդի
փոխհատուցման հարցի մասին՝ պետք է նշել, որ այս դեպքում արդեն ուշ է առանձին անհատներին
առանձին պատիժ սահմանելու համար: Այժմ թուրքական պետությունը և թուրք ժողովուրդը, որպես
ամբողջություն, պետք է ընդունեն պատասխանատվությունն իրենց հայրերի իրագործած հանցագոր-
ծության համար, և, եթե կարելի է գտնել փոխհատուցման որևէ ձև մեծ թվով հայերի կոտորածների և
նրանց ջնջված զավակների դիմաց, ապա դա կարող է լինել աշխարհով մեկ ցրված հայերին իրենց
նախնիների հողերը վերադարձնելը: Ընդ որում, դրանց սահմանները պետք է որոշվեն փոխադարձ հա-
մաձայնությամբ:

Թուրքերն իրավունք չունեն օգտվելու հայկական հողերից, քանի որ դրանց տիրացան, փաստորեն,
մարդասպանության, այսինքն՝ մարդկության դեմ ռժիր գործելու ճանապարհով: Այն փաստը, որ մինչև
հիմա նրանք օգտվում են այդ հողերից, հակասում է արդարության տարրական հիմունքներին. չէ՞ որ
դա պարզև է մարդասպանության համար:

Հայկական հարցի միակ տրամաբանական լուծումն, ըստ Գեմբարսկու, Արևմտյան Հայաստանի
անկախությունն է՝ «ինչպես Նյուրնբերգի դատարանի որոշումների, այնպես էլ ՄԱԿ-ի գլխավոր ասամբ-
լեայի 1960 թ. դեկտեմբերի 14-ի (և 1961 թ. նոյեմբերի 27-ի) գաղութակալության իսպառ վերացման
լույսով»⁴:

Գեմբարսկին հիշատակում է նաև այլ փաստաթղթեր՝ հօգուտ Հայաստանի ազատագրման: Առա-
ջին հերթին, դա Սևրի հաշտության պայմանագիրն է, որի տակ դրված են եվրոպական պետություն-
ների մեծ մասի ստորագրությունները:

Թուրքերի կողմից հնարավոր հակափաստարկներին, թե Խորհրդային Հայաստանն արդեն գոյու-
թյուն ունի՝ որպես հայկական պետություն, և կարիք չկա երկրորդ հայկական պետություն ստեղծելու,
ինչպես նաև այն փաստին, որ հայ պանդուխտների թիվն այնքան մեծ չէ, որպեսզի իրավունք ունենան

¹ Նույն տեղում, էջ 18:

² Տե՛ս Գեմբարսկի Բ., «ԱՄՏ ԱՄՄԿ ՄԻԱԿՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԶԱՐՏՈՒՂԱՐ, ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒ-
ԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ՈՒ. ՏԱՆԻՆ» («Նամակներ աշխարհին» ժողովածու, կազմեց, խմբագրեց, ծանոթագրեց Յ. Կարճիկյանը), Երևան,
1990, էջ 19-20:

³ Նույն տեղում, էջ 25:

⁴ Նույն տեղում, էջ 19-20:

խոսելու ամբողջ ժողովրդի անունից, Գեմբարսկին պատասխանում է նախապես, որ Հայկական ԽՍՀ-ն փոքր, ոչ բերքատու լեռնային երկիր է (28.8 հզ կմ²), որն ի վիճակի չէ տեղավորելու ավելի շատ բնակիչների, քան ունի ներկայումս (1.9 մլն, որից՝ մոտ 1.5 մլն հայ): Ամբողջ աշխարհում չկա մի հայ, որը չփափագեր պատմական հայրենիքի հողերի ազատագրումը: Այդ տեսակետից ամբողջ հայության ձգտումը միասնական է:

Գեմբարսկին առաջարկում է Հայկական հարցի լուծման իր տարբերակը, որը փոխադարձ զիջումների ճանապարհով շահավետ պիտի լինի երկու կողմերի համար: Նա Հայկական հարցի լուծումը տեսնում է հետևյալ կերպ. հակառակ Նրան, որ հայերը տուժած կողմ են և Թուրքիայի կողմից ապօրինի կերպով յուրացված իրենց հողերը վերադարձնելիս պարտավոր չեն որևէ ծախս հոգալու, փոխըմբռնման հասնելու դեպքում հայերը պատրաստ են Թուրքիային վճարելու հողի և այլ անշարժ գույքի դիմաց:

Տարածքային լիակատար անկախության հարցը Գեմբարսկին համարում է անվիճելի և միանշանակ. Արևմտյան Հայաստանը պետք է քաղաքականապես կախված չլինի ո՛չ Թուրքիայից, ո՛չ էլ Խորհրդային Միությունից:

Փոխըմբռնման դեպքում հայերի տարածքային պահանջները սահմանափակվելու են նվազագույնով: Իրենց պահանջած տարածքը հավասար է մոտ 50 հզ կմ²-ի: Որպեսզի պետությունը կարողանա ապահովել անկախության համար անհրաժեշտ բոլոր հիմնական երաշխիքները, այն պետք է ունենա առնվազն սիմվոլիկ ելք դեպի ծով, ինչպես նաև ընդհանուր սահման այնպիսի պետության հետ (Իրան), որն իր նկատմամբ բարյացակամ է տրամադրված և թույլ կտա իր տարածքով կապ հաստատել ամբողջ աշխարհի հետ:

Նամակի վերջում Գեմբարսկին գրում է, որ այս նամակով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հանձնում է ամբողջ մարդկության համար մեծագույն կշիռ ունեցող այս խնդիրը և խորապես հավատացած է, որ դա բեկման պահ կդառնա հայ ժողովրդի պատմության համար¹:

«Նամակ իմ հայ ընթերցողներին» հոդվածում Բ. Գեմբարսկին դիմում է հայերին՝ առաջարկելով Հայկական հարցի լուծմանն ուղղված իր ծրագիրը, որի իրականացման համար ներկայացնում է հետևյալ քայլերը.

- հայերի պատմական հայրենիքի գոնե մեկ մասի ազատագրման համար հարկավոր է բաց նամակներով դիմել մի կողմից՝ պետությունների ղեկավարներին, մյուս կողմից՝ աշխարհի բոլոր նշանավոր մարդկանց հղել մասնավոր նամակներ՝ կցելով համապատասխան գրականություն: Գեմբարսկին արդեն սկսել էր աշխատել այս ուղղությամբ՝ գրելով իր երկու նամակները «ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին» և «Հնդկաստանի նախագահին»: Նա առանձնակի շեշտում է եվրոպական հեղինակավոր թերթերում դրանց տպագրության կարևորությունը:

- անհրաժեշտ է ստեղծել հայ ժողովրդի բարեկամների տեղական ընկերություններ ամբողջ աշխարհում և գլխավորապես արևմտաեվրոպական երկրներում ու ԱՄՆ-ում: Այս նպատակով էին գրվել Գեմբարսկու «Երեք նամակներն իր անձանոթ ընթերցողներին», որոնք, ինչպես նաև նախկինում նշված նամակները, գրված էին օտարալեզու մամուլի համար:

Հարկավոր է աշխատանքներ տանել՝ քաղաքական դաշնակիցներ ձեռք բերելու ուղղությամբ, ընդ որում առավել արդյունավետ կլինեն դաշնակիցներ փնտրել աֆրիկյան երկրներում, որոնք հատկապես զգայուն են գաղութային խնդիրների նկատմամբ: Պետք է համագործակցության եզրեր գտնել նաև արաբական երկրների տարածքում, Ասիայի, Լատինական Ամերիկայի ու Հարավային Եվրոպայի որոշ երկրներում, այսինքն՝ այնտեղ, որտեղ կլինեն հայերի պահանջների պաշտպանության հնարավորություն:

Շատ կարևոր է համագործակցել տարբեր միջազգային կազմակերպությունների հետ և փորձել ստանալ նրանց աջակցությունը ՄԱԿ-ի ու նրա մասնաճյուղերի համաժողովներում:

Պետք է Հայկական հարցն առաջ քաշել միջազգային կոնֆերանսներում, օգտագործել ՄԱԿ-ի՝ գաղութատիրությունը վերացնելու մասին ղեկավարացիան, Նյուրնբերգի միջազգային դատարանի որոշումները կապել Հայոց ցեղասպանությանը:

Այս աշխատանքի արդյունքում Գեմբարսկին տեսնում էր երկու հնարավոր հանգուցալուծում.

- թուրքական կառավարությունը համաձայնություն կհայտնի երկկողմ համաձայնագիր կնքել հայ գաղթականների հետ՝ փոխադարձ զիջումների ճանապարհով:

- թուրքական կառավարությունը չի ցանկանա որևէ բանակցություն վարել: Այս դեպքում, հասարակական կարծիքի համապատասխան նախապատրաստությունից և մի շարք երկրների աջակցությունն ապահովելուց հետո անհրաժեշտ կլինի դիմել միջազգային դատարան, որտեղ կդրվի պահանջ՝ հատու-

¹ Տե՛ս Գեմբարսկի Բ., «ԲԱՑ ՆԱՄԱԿ ՄԻԱԿՈՐԿԱԾ ԱՉԳԵՐԻ ԿԱՉՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ՈՒ. ՏԱՆԻՆ», էջ 32:

ցելու հսկայական նյութական և բարոյական կորուստները և վերադարձնելու կողոպտված հայկական հողերը:

Գեմբարսկին առավել ընդունելի էր համարում առաջին տարբերակը՝ վստահ լինելով, որ դատարան դիմելու անհրաժեշտություն չի լինի, և եթե հայերն իրոք ձգտեն դրան, ապա նրանց պատմական հայրենիքը խաղաղ ճանապարհով ազատագրելու ծրագիրը միանգամայն իրականանալի կլինի:

Բ. Գեմբարսկին Հայկական հարցի արծարծման ուղղությամբ հսկայածավալ աշխատանքներ է իրականացրել ՄԱԿ-ում, ՅՈՒՆԵՍԿՕ-ում, տարբեր երկրների պետական բարձրագույն մարմիններում: Սրանք աշխատանքներ են, որ պահանջում էին ոչ միայն ժամանակ, ջանք, եռանդ, սեր ու նվիրվածություն, այլև զգալի դրամական միջոցներ:

Հանդես գալով 1960-1970-ական թթ.՝ Գեմբարսկին դատապարտում էր 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, աշխարհի անտարբերությունը հայ ժողովրդի տխուր ճակատագրի հանդեպ և փորձում ապացուցել, որ հայերի իրավունքները պետք է վերականգնվեն իրենց հայրենի հողի վրա: Իր գործունեությամբ նա սկիզբ էր դրել Արևմտյան Հայաստանի ազատագրման ծրագրի իրականացմանը և հույս ուներ, որ կստեղծվի Արևմտյան Հայաստանի խաղաղ ճանապարհով ազատագրման պայթարի կոմիտե, որը կշարունակի իր սկսած գործը:

Բոգդան Գեմբարսկին, լինելով մեծ մարդասեր, հավատում էր արդարության հաղթանակին և հույս ուներ, որ թուրքերը, հանուն համաշխարհային ամրոն իրենց դեմքից մաքրելու, կվերադարձնեն հայերի՝ անօրինաբար յուրացրած պատմական հայրենիքը:

Ճովինար Յոլյան

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ
ԲՈԳԴԱՆ ԳԵՄԲԱՐՍԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր՝ Բոգդան Գեմբարսկի, Հայկական հարց, Հայոց ցեղասպանություն

Լեհ հրապարակախոս Բոգդան Գեմբարսկին Հայկական հարցով սկսել է զբաղվել 20-րդ դարի երկրորդ կեսից: Նա Հայկական հարցի արծարծման ուղղությամբ հսկայածավալ աշխատանքներ է իրականացրել ՄԱԿ-ում, ՅՈՒՆԵՍԿՕ-ում, տարբեր երկրների պետական բարձրագույն մարմիններում՝ առաջարկելով լուծման իր տարբերակը: Իր հողվածներում Գեմբարսկին դատապարտել է 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, աշխարհի անտարբերությունը հայ ժողովրդի ողբերգության հանդեպ և փորձել է ապացուցել, որ հայերի իրավունքները պետք է վերականգնվեն իրենց հայրենի հողի վրա:

Цовинар Елчян

ОТРАЖЕНИЕ ТЕМЫ ГЕНОЦИДА АРМЯН В ПИСЬМАХ БОГДАНА ГЕМБАРСКИ

Ключевые слова: Богдан Гембарски, Армянский вопрос, Геноцид армян

Польский публицист Богдан Гембарски стал интересоваться Армянским вопросом во второй половине XX века. Он проделал огромную работу для продвижения Армянского вопроса в ООН, ЮНЕСКО, в высшие государственные органы разных стран, предлагая свой вариант решения проблемы. В своих статьях Гембарски осуждал Геноцид армян 1915 года, безразличие мирового сообщества к трагедии армянского народа и пытался доказать, что права армян на их родной земле должны быть восстановлены.

Tsovinar Elchyan

**THE ARMENIAN ISSUE AND GENOCIDE IN THE
LETTERS OF BOGDAN GEMBARSKI**

Keywords: Bogdan Gembarski, Armenian Question, Armenian Genocide

Polish publicist Bogdan Gembarski started to study the Armenian Question in the second half of the 20th century. He did a great work in representing the Armenian Question to UN, UNESCO and other state institutions of different countries, offering his version of the solution of the question. In his articles, Gembarski condemned the Armenian Genocide of 1915 and the world's indifference towards the tragedy of the Armenian nation. He tried to prove that the rights of Armenians has to be restored in their native land.